



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., 2-1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 509
24 նոյեմբեր 2017թ.

**ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նալբանդյան,

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 21-ի թիվ 41-Ա ,42-Ա
և 43-Ն որոշումները:

Առդիր՝ մեկ ֆայլ:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Լ Ե Կ Ո Ն Չ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

Կար. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 41-Ա

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի նիստի օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆԱՄՆԱԳՈՄԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -5

Դեմ -0


Ձեռնպահ -0

1. ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԳԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42-Ա

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆԱՍՆԱԳՈՄԵՐՈՆ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կնոույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման պահանջներով և նկատի ունենալով, որ Գնել Սարգսյանի, Վրեժ Այդինյանի, Սարիբեկ Սարգսյանի և Էմմա Գասպարյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող 857.38 քմ մակերեսով անասնաշենքը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.09295 հա հողատարածքը /ծածկագիր՝ 06-045-0173-0025/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ գյուղի 9-րդ փողոց, թիվ 9 տան բնակիչ Գնել Սարգսյանին:

- 1)Անասնագոմի ուղղակի վաճառքի գինը կազմում է 600166 /վեց հարյուր հազար հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ,
- 2)հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 89232 /ութանասունինը հազար երկու հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 96 /իննիսունվեց/ ՀՀ դրամ:

2.Թույլատրել Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող 857.86 քմ մակերեսով անասնաշենքը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.09257 հա հողատարածքը /ծածկագիր՝ 06-045-0174-0004/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ գյուղի 9-րդ փողոց, թիվ 1 տան բնակիչ Էմմա Գասպարյանին:

- 1)Անասնագոմի ուղղակի վաճառքի գինը կազմում է 600502 /վեց հարյուր հազար հինգ հարյուր երկու/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 700/յոթ հարյուր/ ՀՀ դրամ,
- 2)հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 88867 /ութանասունութ հազար ութ հարյուր վաթսույոթ/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 96 /իննիսունվեց/ ՀՀ դրամ:

3.Թույլատրել Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող 428.27 քմ մակերեսով անասնաշենքը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.04647 հա հողատարածքը /ծածկագիր՝ 06-045-0173-0024/ ուղղակի վաճառքով

օտարել Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ գյուղի 4-րդ փողոց թիվ 18 տան
բնակիչ Վրեժ Այդինյանին:

1) Անասնագործի ուղղակի վաճառքի գինը կազմում է 299789 /երկու հարյուր իննսունինը հազար յոթ
հարյուր ութանասունինը/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 700/յոթ հարյուր/ ՀՀ դրամ,

2) հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 44611 /քառասունչորս հազար վեց հարյուր
տասնմեկ/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 96/իննիսունվեց/ ՀՀ դրամ:

4. Թույլատրելի Թումանյան համայնքի նեփականություն հանդիմացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան
համայնք, գ. Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող 432.2 քմ մակերեսով անասնաշենքը
և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած գյուղատնտեսական արտադրական
օբյեկտների 0.04647 հա հողատարածքը /ծածկագիր՝ 06-045-0173-0023/ ուղղակի վաճառքով
օտարել Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ գյուղի 2-րդ փողոց թիվ 12 տան
բնակիչ Սարիբեկ Սարգսյանին:

1) Անասնագործի ուղղակի վաճառքի գինը կազմում է 302540 /երեք հարյուր երկու հազար հինգ
հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 700/յոթ հարյուր/ ՀՀ դրամ,

2) հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 44611 /քառասունչորս հազար վեց հարյուր
տասնմեկ/ ՀՀ դրամ, 1քմ-ի արժեքը՝ 96/իննիսունվեց/ ՀՀ դրամ:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -1

1. ՄԻՒԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

1. ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

2. ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

3. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

4. ՎԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

5. ՎԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԿԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 43-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի 2017թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Վարչական մասի եկամուտներում՝
ա. պակասեցնել «Հողի հարկը համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար» 500.0 հազ. դրամով, սահմանել 9909.5 հազ. ՀՀ դրամ,
բ. պակասեցնել «Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարները» 1000.0 հազ. ՀՀ դրամ, սահմանել 3579.8 հազ. ՀՀ դրամ:

2) Վարչական մասի ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա. կառավարման ապարատի նախահաշվի 1.1.1 դասակարգման «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» (հոդ. 4112) համար նախատեսված ծախսը պակասեցնել 1000.0 հազ. ՀՀ դրամով, «Տրանսպորտային նյութեր» (հոդ. 4264) համար նախատեսված ծախսերը պակասել 200.0 հազ. ՀՀ դրամով, «Արտասահմանյան գործուղումները» (հոդ. 4222) համար նախատեսված ծախսերը պակասեցնել 200.0 հազ. ՀՀ դրամով, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (հոդ. 4239) համար նախատեսված ծախսերը պակասեցնել 100.0 հազ. դրամով:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

2. ՄԻՈՒԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

[Handwritten signature]

3. ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

[Handwritten signature]

4. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

[Handwritten signature]

5. ԿԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

[Handwritten signature]

6. ԿԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ



[Large handwritten signature]

ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ